Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն **23.6/[61679]-11**

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-ԻՆ ԺԱՄԸ 12:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ

Հրավիրվածներ ՝

Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Անանյան	ՀՀ վարչապետի օգնական
Վ. Նիկոյան	ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ա. Կարախանյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան

	ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Ջ. Ֆրիզեր	«Egis Bceom International» թիմի ղեկավար
Դ. Հովսեփյան	«Egis Bceom International» թիմի ղեկավարի տեղակալ
Հ. Նորեկյան	«Egis Bceom International» նախագծման ինժեներ
Լ. Վարդանյան	թարգմանչուհի

1. Անկախ մոնիթորինգի գործակալության ընտրության մրցույթի արդյունքների հաստատում

(Հ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Անկախ մոնիթորինգի գործակալության ընտրության մրցույթի արդյունքները:

2. Աուդիտորի ընտրության գնահատման հանձնաժողովի կողմից կազմված կարճ ցուցակի հաստատում

(Հ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել աուդիտորի ընտրության գնահատման հանձնաժողովի կողմից կազմված կարճ ցուցակը՝ ԱԶԲ-ի կողմից ներկայացվելիք դրական եզրակացությամբ:

3. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 2-րդ տրանշի՝ Աշտարակ-Թալին ճանապարհի Ագարակ և Ուջան բնակավայրերով անցնող հատվածների ծրագծին հավանություն տալու մասին

(Ա. Կարախանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ «Egis Bceom International» կազմակերպության ներկայացված տարբերակին՝ նախապատվությունը տալով Ագարակ և Ուջան համայնքներում շրջանցող ճանապարհների կառուցմանը:

4. Այլ հարցեր

(Մ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Կարախանյանին՝

ա. գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկել տվյալ անդամների փոխարեն պաշտոնի նշանակված համապատասխան պաշտոնատար անձանց,

բ. հայտարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի աշխատակազմի սոցիալական պաշտպանության վերաբնակեցման և բնապահպանության բաժնի մասնագետի թափուր պաշտոնի համար մրցույթ և զուգահեռաբար, մինչև մրցույթի արդյունքների ամփոփումը, ժամանակավորապես աշխատանքի ընդունել համապատասխան անձի.

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝

ա. ներկայացնել առաջարկություն՝ 2009 թվականի հոկտեմբերի 26-ի N 892-Ա որոշման N 2 հավելվածով հաստատված Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի անհատական կազմում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ,

բ. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի վարչական տարածքի նախագծման ու վերանորոգման հարցը քննության առնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ